Արձանագրության 3

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/22» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

25.09.2017թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Ղուկասյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Օ. Մկրտչյան /գնահատող/, Ս. Ղարագյոզյան /գնահատող/
Վ. Գրիգորյան /բացող/, Ա. Ղևոնդյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ն. Ղուկասյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցների «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Բաց մրցույթի ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ն. Ղուկասյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել բաց մրցույթի ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ	Բավարար
«Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/22» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցների մասին

(Ն. Ղուկասյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/22» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել.

-1-3-րդ չափաբաժինների մասով՝ «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ին,

-4-րդ չափաբաժնի մասով «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ն. Ղուկասյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝

- 1-3-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ին,

-4-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ-ին:

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ն. Ղուկասյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ն. Ղուկասյան

Անդամներ՝ ---------- Օ. Մկրտչյան

---------- Ս. Ղարագյոզյան

---------- Վ. Գրիգորյան

---------- Ա. Ղևոնդյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան